

1.2.3. Ձկնորսություն, ձկնաբուծություն²

Հանրապետությունում 2003թ. հունվար-դեկտեմբերին, համաձայն ձկնորսության և ձկնաբուծությանը զբաղվող առևտրային կազմակերպությունների ներկայացրած պետական վիճակագրական հաշվետվությունների տվյալների, իրականացվել է 682.6 մլն. դրամի ձկան որս, որը գերազանցել է 2002թ. նակարդակը 24.0%-ով (համադրելի գներով):

Ձկնորսության արդյունքները հանրապետությունում հունվար-դեկտեմբերին

(հազ. դրամ)

	2003թ.	2002թ.	2003թ. 2002թ. նկատմամբ, %
Կատարվել է ձկան որս՝			
ընթացիկ գներով	682631.0	550504.3	x
համադրելի գներով	682631.0	550527.8	124.0
Իրացվել է ձուկ	598466.0	497521.3	x

² Առանց անհատ ձեռնարկատերերի և տնային տնտեսությունների (ոչ ֆորմալ) գործունեության գնահատմամբ: